ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. հուլիսի 5-ից 8-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Վահան Քերոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ռուսաստանի Դաշնություն
   (ք.Եկատերինբուրգ՝ 2021թ. հուլիսի 5-ից 7-ը,
   ք.Մոսկվա՝ 2021թ. հուլիսի 7-ից 8-ը)

4. **Հրավիրող կողմը՝**

   - ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարություն,
   - ՌԴ տնտեսական զարգացման նախարարություն

5. **Գործուղման նպատակը՝**

   - Մասնակցություն «Իննոպրոմ-2021» միջազգային արդյունաբերական 11-րդ ցուցահանդեսին
   - Առևտրատնտեսական ոլորտի օրակարգային հարցերի քննարկում

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

   Եկատերինբուրգում կայացած «Իննոպրոմ-2021» միջազգային արդյունաբերական ցուցահանդեսի շրջանակներում կայացան հետևյալ հանդիպումները.

   Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության և առևտրի նախարար՝ Դենիս Մանտուրովի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին հայ-ռուսական առևտրատնտեսական համագործակցության հեռանկարները, մասնավորապես՝ արդյունաբերության տարբեր ճյուղերում նոր համատեղ նախագծերի իրականացման հեռանկարները: Նախարար Դ.Մանտուրովը տեղեկացրեց գյուղատնտեսական մեքենաշինական և ավտոմոբիլաշինական ընկերությունների

արտադրանքը Հայաստան արտահանելու հետաքրքրվածության մասին, մասնավորապես՝ մասնակցություն գործող տրանսպորտային համակարգի վերազինման գործընթացին: Նախարար Վ.Քերոբյանը ներկայացրեց Հայաստանում արևային պանելների արտադրության և դրանց՝ ԱՄՆ արտահանելու հեռանկարները, առաջարկեց՝ դիտարկել չինական արտադրության կոմպլեկտավորող մասերը փոխարինելու հնարավորությունը՝ ռուսական ընկերությունների արտադրանքով: Ի պատասխան՝ Դ.Մանտուրովը տեղեկացրեց, որ ռուսաստանյան «Ռենովա» ընկերությունը պատրաստվում է ՌԴ Կալինինգրադի մարզում կազմակերպել արևային պանելների խոշոր արտադրություն, և հնարավոր է այդ ընկերությունը հետաքրքրված լինի նման համագործակցությամբ: (Մասնավոր զրույցի ընթացքում ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Վիկտոր Վեկսելբերգը մեծ հետաքրքրություն և համագործակցության պատրաստակամություն հայտնեց այդ առաջարկի վերաբերյալ):

Ռուսական կողմին ներկայացվեց նաև ՌԴ Հյուսիսային Օսետիայում (Վլադիկավկազ) կամ Աստրախանի մարզում լոգիստիկ կենտրոն ստեղծելու մասին հայկական կողմի ծրագիրը: Նման կենտրոնը հնարավորություն կընձեռի մուլտիմոդալ եղանակով բեռներ տեղափոխել Հայաստանից դեպի Ղազախստան և Ռուսաստանի արևելյան մարզեր և հակառակ ուղղությամբ, ինչը զգալիորեն կնվազեցնի տրանսպորտային ծախսերը և կնպաստի առևտրաշրջանառության ծավալների աճին:

Դ.Մանտուրովի հետ քննարկվեց նաև Հայաստանում ռուսական «Սպուտնիկ V» պատվաստանյութի շշալցման հնարավորությունները՝ առաջին խմբաքանակը նախատեսվում է իրականացնել ս.թ. հուլիսի երկրորդ կեսին:

Խոսվեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հեռանկարների մասին, պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ հեռավար եղանակով կազմակերպել SS գործարար համաժողով, ընտրել մի քանի ծրագրեր՝ համատեղ իրականացման նպատակով:

Հանդիպման ընթացքում ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ ակտիվացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից ստեղծված համատեղ աշխատանքային խմբի աշխատանքները և մշակել ճանապարհային քարտեզ:

Ռուսաստանի Դաշնության կլաստերների և տեխնոպարկերի ասոցիացիայի տնօրեն Անդրեյ Շպիլենկոյի հետ հանդիպման ընթացքում, վերջինս ներկայացրեց Ասոցիացիայի գործունեության ուղղություններն ու նպատակները, մասնավորապես՝ տեխնոպարկերի և արդյունաբերական պարկերի իրավապայմանագրային դաշտի ստեղծումն ու այդ ոլորտին առնչվող իրավական ակտերի փորձաքննությունը, պատրաստակամություն հայտնեց իրականացնել հայկական կողմի ներկայացվելիք նախագծերի փորձաքննություն, ինչպես նաև առաջարկեց ռուսական կազմակերպության միջնորդությունը՝ արդյունաբերական գոտիների, կլաստերների և տեխնոպարկերի ստեղծման նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի օժանդակություն ստանալու համար:

Սերբիայի Հանրապետության նորարարությունների և տեխնոլոգիական զարգացման նախարար Նենադա Պոպովիչի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին երկու երկրների տնտեսությունների վրա «Covid-19»-ի բացասական ազդեցությունը մեղմելուն ուղղված՝ Հայաստանի և Սերբիայի կառավարությունների կողմից իրականացվող օժանդակության ծրագրերը, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտներում՝ նորարարությունների կիրառման առանձնահատկությունները: Ն.Պոպովիչը հրավիրեց Վ. Քերոբյանին այցելել Սերբիա՝ փորձի փոխանակման, տնտեսական, նորարարական և տեխնոլոգիական համագործակցության հեռանկարները քննարկելու նպատակով:

Ուրալի տարածաշրջանի առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Անդրեյ Բեսեդինի հետ հանդիպմանը քննարկվեց Հայաստանի և Ուրալի տարածաշրջանի գործարար կապերի ընդլայնման հնարավորությունները, ռուսաստանյան գործարարների հնարավոր մասնակցությունը հայկական ԱՏԳ-ներում՝ արտադրանքն երրորդ երկրներ արտահանելու հնարավորությունները, ինչպես նաև հայ գործարարների այցի կազմակերպումը ՌԴ Սվերդլովսկի մարզ:

ՌԴ «Սկոլկովո» հիմնադրամի տնօրեն Արկադի Դվորկովիչի հետ հանդիպմանը խոսվեց Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղությունների, հայկական կողմի համար դրանց հասանելության մասին և առաջարկվեց ներկայացնել հայկական ստարտափներին օգտակար հիմնական կրթական թեմաները:

ՌԴ Սվերդլովսկի մարզի միջազգային և արտաքին տնտեսական կապերի նախարար Վասիլի Կոզլովի հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին ս.թ. հուլիսի 6-ին ք.Եկատերինբուրգում ստորագրված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Սվերդլովսկի մարզի կառավարության (Ռուսաստանի Դաշնություն) միջև առևտրատնտեսական ոլորտում արտաքին տնտեսական կապերի իրականացման մասին» Համաձայնագրի իրականացմանն ուղղված քայլերը, և այդ նպատակով որոշեցին ձևավորել համատեղ աշխատանքային խումբ, որը կմշակի միջոցառումների ծրագիր և դրա իրականացման ճանապարհային քարտեզ: Նախարարները մտքեր փոխանակեցին՝ Հայաստանի և Սվերդլովսկի մարզի միջև առևտրաշրջանառությունն ավելացնելու և գործարար կապերը խորացնելու վերաբերյալ: Հաշվի առնելով Սվերդլովսկի մարզում ՏՏ ոլորտում արձանագրված հաջողությունները, նախարար Վ.Քերոբյանը առաջարկեց կազմակերպել նշված ոլորտի ընկերությունների հանդիպում, ինչը հնարավորություն կընձեռի մասնակիցներին կիսվել հաջողված փորձով (best practice), ինչպես նաև քննարկել համատեղ ծրագրերի իրականացման հեռանկարները:

Ռուսատանի Դաշնության տնտեսական զարգացման նախարար Մաքսիմ Ռեշետնիկովի հետ ք.Մոսկվայում կայացած հանդիպման ընթացքում քննարկվեցին հայ-ռուսական առևտրատնտեսական ոլորտի օրակարգային հարցերը, այդ թվում՝ առևտրային հարաբերությունները՝ ներդրումային

բաղադրիչով համալրելու կարևորությունը, երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալների ավելացման նպատակով՝ տրանսպորտային ուղիների ապաշրջափակումը, Հյուսիսային Օսետիայում (Վլադիկավկազ) կամ Աստրախանի մարզում լոգիստիկ կենտրոնի ստեղծումը, միջտարածաշրջանային համագործակցության ակտիվացումը, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համակարգման ներքո իրականացվող ծրագրերում տնտեսական բաղադրիչի ավելացումը: Նախարար Վ.Քերոբյանն անդրադարձավ երկու երկրների միջև առևտրում առկա խոչընդոտներին, մասնավորապես՝ ռուսական ընկերությունների կողմից հայկական ընկերություններին մատակարարված ապրանքների դիմաց գանձվող ԱԱՀ-ի և դրա հետ վերադարձի խնդրին: ՌԴ իրավասու կառույցների հետ հարցն ուսումնասիրելու և փաստերը հաստատվելու պարագայում՝ նախարար Մ.Ռեշետնիկովը խոստացավ ջանքեր գործադրել նման խախտումները վերացնելու համար: Անդրադառնալով ԵԱՏՄ շրջանակներում համագործակցությանը, Վ. Քերոբյանն առաջարկեց դիտարկել երրորդ երկրներից ԵԱՏՄ տարածք ներմուծվող գինիների համար մաքսատուրքի ավելացման հնարավորությունը, ինչը կպաշտպանի ներքին արտադրողին և կնպաստի ոլորտի զարգացմանը: Բոլոր նշված հարցերը քննարկելու և համագործակցության մշտադիտացման համար կողմերը պայմանավորվեցին ձևավորել համատեղ աշխատանքային խումբ, որը կգլխավորեն՝ հայկական կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ.Սիմոնյանը, իսկ ռուսական կողմից՝ ՌԴ տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Դմիտրի Վոլվաչը: Խումբը կմշակի համագործակցության ծրագիր և դրա իրականացմանն ուղղված ճանապարհային քարտեզ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

«Իննոպրոմ-2021» միջազգային արդյունաբերական 11-րդ ցուցահանդեսի շրջանակներում՝ ս.թ. հուլիսի 6-ին ք. Եկատերինբուրգում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Սվերդլովսկի մարզի կառավարության (Ռուսաստանի Դաշնություն) միջև առևտրատնտեսական ոլորտում արտաքին տնտեսական կապերի իրականացման մասին» Համաձայնագիր (կցվում է):

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

13.07.21թ.